# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## «ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (փաստաթղթային կոդ Կ-135-27.09.2017-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| Առաջարկության փոփոխության /լրացման/ հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերվում է առաջարկությունը | Առաջարկությունը /փոփոխությունը, լրացումը/ | Առաջարկության վերաբերյալ հեղինակ /հիմնական զեկուցողի եզրակացությունը/ | Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|
| Աժ պատգամավոր, Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խ.Հարությունյան | Նախագծի 17-րդ հոդված | Նախագծի 17-րդ հոդվածով օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասում ավելացնել հանձնաժողովի ‹‹սահմանած կարգով›› բառերը, 2-րդ մասի տեքստից հանել ‹‹պետական բյուջե փոխանցման դեպքերը›› արտահայտությունը, քանի որ նման դեպքերը կարող են սահմանվել միայն օրենքով: | Ընդունվել է, խմբագրվել է: 1.Կառուցման ժամանակահատվածը ներառող էլեկտրական կամ ջերմային էներգիայի արտադրության (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության) լիցենզիա ստանալու, արտադրության լիցենզիայում վերակառուցման ժամանակահատված ամրարգրելու, նշված ժամանակահատվածները երկարաձգելու նպատակով անձինք հանձնաժողով են ներկայացնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող երաշխիքներ՝ հանձնաժողովի սահմանած կարգով:<br><br>**2.** Էլեկտրական կամ ջերմային էներգիայի արտադրության (ներառյալ՝ էլեկտրական եւ ջերմային էներգիայի համակցված արտադրության) լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու, լիցենզիայով ամրագրված ժամանակահատվածում կայանը չվերակառուցելու, լիցենզայով | Ընդունվել է: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | ամրագրված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգվելու, ինչպես նաև արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած կայանի կառուցման նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով, հանձնաժողով ներկայացնելու ժամկետը 2-րդ անգամ երկարաձվելու դեպքում երաշխիքային գումարը հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և չափով ենթակա է փոխանցման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:» | |
| | Նախագծի 18-րդ հոդված | | Ընդունվել է, խմբագրվել է: 1.Սույն հոդվածի 1-2-րդ կետերում նշված գործարքի համաձայնեցումը կարող է մերժվել, եթե այն խախտում կամ կարող է խախտել էներգետիկ համակարգի հուսալիությունը կամ անվտանգությունը կամ ներքին շուկայի սպառողների շահերը, կամ ձեռքբերողը չունի անհրաժեշտ փորձ, ինչպես նաև համաձայնություն ստանալու համար ներկայացված փաստաթղթերը և (կամ) տեղեկատվությունը չեն համապատասխանում հանձնաժողովի կողմից սահմանված կարգի պահանջներին, ինչպես նաև ՀՀ կառավարության գնահատմամբ վնասում կամ կարող է վնասել ազգային անվտանգությանը կամ պետական | Ընդունվել է: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 3. Նախագծի 18-րդ հոդվածով օրենքի 27-րդ հոդվածի 3- րդ մասի առաջարկվող տեքստը վերախմբագրել հետևյալ նկատառումներից ելնելով, որ եթե գործարքը կասկածելի է թվում ազգային անվտանգության կամ պետական շահերի տեսակետից, ապա այդ քաղաքական գնահատականը կարող է տալ միայն քաղաքական իրավասու մարմինը՝ կառավարությունը կամ պետական լիազոր մարմինը, հետևաբար նշված մարմիններն էլ կարող են որոշել գործարքի ճակատագիրը: Իսկ լիցենզավորված անձը հնարավորություն պետք է ունենա բողոքարկել այդ որոշումը դատական կարգով: | շահերին: | |
| ՀՀ ԱԺ պատգամավոր Հակոբ Հակոբյան | Հոդվածներ 5-րդ, 6-րդ, 9-րդ | **1.** Նախագծի տեքստը (հոդվածներ 5-րդ, 6-րդ, 9-րդ) խմբագրել այնպես, որ պահպանվի Հանձնաժողովի ինքնուրույնության ներկայիս աստիճանը: Մասնավորապես՝ այդ առումով խմբագրել Նախագծի 5-րդ հոդվածով առաջարկվող 5.1-րդ հոդվածի 2-րդ մասի ե),զ),է) և ը) կետերը:<br>1.1 Նախագծի 5-րդ հոդվածով առաջարկվող՝ «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) նոր՝ 5.1-րդ հոդվածի 2-րդ մասի «ե»,«զ»,«է»,«ը» ենթակետերի համաձայն | **1.** Չի ընդունվել:<br>Էներգետիկայի բնագավառում ռազմավարական ծրագրերի մշակումը հանդիսանում է էներգետիկայի բնագավառի ՀՀ կառավարության կողմից լիազորված մարմնի իրավասություն և ռազամավարական ու զարգացման ծրագրերում ներառված են էներգետիկ անվտանգության և հուսալիության ապահովմանն ուղված միջոցառումներ, մասնավորապես՝ նոր հզորությունների, էլեկտրահաղորդման գծերի կառուցում, տարածաշրջանային ինտեգրում և այլն, ուստի Նախագծի 5.1 | Չի ընդունվել: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Հանձնաժողովը իր լիազորությունների իրականացումը պետք է նախապես համաձայնեցնի ՀՀ կառավարության կողմից լիազորված մարմնի հետ (այն դեպքում, երբ նույն հոդվածի 1-ին մասում նշված է, որ լիազորված մարմինը «օժանդակում է էներգետիկայի բնակավառի պետական կարգավորմանը»): Այսինք, ըստ էության, սա նշանակում է, որ Հանձնաժողովը դադարում է հանդիսանալ անկախ (կամ ինքնավար) պետական մարնին, ինչն էլ սկզբունքորեն փոխում է տվյալ շուկայի՝ ներկայումս պետական կարգավորման հայեցակարգը: Ընդ որում, տվյալ մոտեցումը հակասում է նաև «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի՝ Հանձնաժողովի համապատասխան լիազորություններին վերաբերող դրույթներին (այդ օրենքում նմանատիպ փոփոխությունների նախագիծ ներկայացված չէ): Մյուս կողմից, հասկանալի է, որ առկա է նաև Հանձնաժողովի և լիազորված մարմնի միջև սերտ համագործակցության խնդիր, ուստի այս առումով, կարծում ենք, անհրաժեշտ է նախ սկզբունքորեն որոշել, թե Հանձնաժողովը շարունակելու է մնալ որպես անկախ մարմին, թե ոչ: Եթե Հանձնաժողովը մնալու է որպես այդպիսին, ապա հարկ կլինի Նախագծից հանել լիազորված մարմնի հետ նրա կողմից | հոդվածի 2-րդ մասի «դ»-ից «զ» ենթակետերով նախատեսված լիազոր մարմնի իրավասությունները մեր գնահատմամբ որևէ կերպ չեն խաթարում էներգետիկայի ոլորտի ինքնուրույն կարգավորող մարմնի, ի դեմս ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, գործունեության անկախությունը: Ընդհակառակը, առաջարկվող փոփոխություններով նախատեսվում է հստակեցնել ոլորտում քաղաքականություն իրականացնող մարմնի և կարգավորող մարմնի իրավասությունների շրջանակը, օրենսդրական ամրագրում տալ այն գործընթացին, որը օբեկտիվորեն կիրառվում է երկու պետական կառույցների փոխգործակցության շրջանակում:<br><br>Չի ընդունվել:<br>«Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 35-րդ հոդվածով առաջարկվող օրենքի 42-րդ հոդվածում տույժերի կոնկրետ չափերի ամրագրումը գտնում ենք ոչ նպատակահարմար հետևյալ հիմնավորմամբ<br>Նշված հոդվածը խմբագրելիս հաշվի է առնվել մի շարք օրենքներում, այդ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Նախագծի 35-րդ հոդվածով առաջարկվող օրենքի 42-րդ | համաձայնեցման պարտավորությունները, կամ էլ այդ լիազորությունները վերապահել լիազորված մարմնին, բայց սահմանել դրանք իրականացնելու համար անկախ Հանձնաժողովի համաձայնությունը ստանալու պարտավորություն՝ արդեն լիազորված մարմնի համար: Իսկ այդ դեպքում, երբ որոշվի, որ Հանձնաժողովը պետք է կորցնի իր կարգավիճակը, ապա հարկ կլինի ամբողջությամբ վերանայել նաև «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքը, իսկ համապատասխան օրենքի նախագիծն էլ պետք է հանդիսանա տվյալ փաթեթի բաղկացուցիչ մասը:<br><br>Նախագծի 35-րդ հոդվածով առաջարկվող օրենքի 42-րդ հոդվածում ամրագրել տույժերի կոնկրետ չափեր: Մասնավորապես՝ 20-40 մլն դրամի փոխարեն նախատեսել կոնկրետ 30 մլն դրամի տույժ: | թվում՝ գործող «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում, ՀՀ ջրային օրենսգրքում, ինչպես նաև ՀՀ կառավարության հավանությանն արժանացած Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծում ամրագրված տուգանքի կիրառման մոտեցումը:<br><br>Վարչական իրավա-խախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի, ինչպես նաև գործող օրենսգրքի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող մարմինների կողմից նշանակվող վարչական տույժի տեսակները կամ չափերը պետք է համապատասխանեն կատարված վարչական իրավախախտման բնույթին, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներին: Նշվածը հաշվի առնելով օրենքի նախագծում ամրագրված է ոչ թե տուգանքի կոնկրետ չափ, այլ որոշակի միջակայք, որը թույլ կտա յուրաքանչյուր իրավախախտման դեպքում, գնահատելով բոլոր փաստական հանգամանքները, մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, կիրառել դրան համարժեք (այլ ոչ թե բոլոր դեպքերում նույն) տուգանք: | Չի ընդունվել: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ՀՀ ԱԺ պատգամավոր Վահան Հարությունյան | Հոդված 3-ում առաջարկվող 4-րդ հոդվածի 25-րդ ենթակետ | Սույն հոդվածում «որակավորված սպառող»՝ հիմնական հասկացությունը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ *սեփական դիմումի հիման վրա հանձնաժողովի կողմից հաստատված շուկայի կանոններով սահմանված չափանիշներին համապատասխանելու հիմքով էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի կողմից որակավորված ճանաչված սպառողը.* | Ընդունվել է, խմբագրվել է. **որակավորված սպառող՝** սեփական դիմումի հիման վրա հանձնաժողովի կողմից հաստատված շուկայի կանոններով սահմանված չափանիշներին համապատասխանելու հիմքով էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի կողմից որակավորված ճանաչված սպառողը. | Ընդունվել է: |
| ՀՀ ԱԺ պատգամավոր Սերգեյ Բագրատյան | Հոդված 9-ով նախատեսված 17-րդ հոդվածի գ) կետ<br><br>Հոդված 35-ով նախատեսված 42-րդ հոդված՝ 12-րդ և 13-րդ մասեր | գ)իր կողմից սահմանված կարգով էներգետիկայի բնագավառում իրականացնել լիցենզավորում՝ տրամադրել լիցենզիաներ, երկարաձգել դրանց գործողության ժամկետները, վերաձևակերպել, կասեցնել և դադարեցնել (այդ թվում՝ դատական կարգով դադարեցնելու համար դատարան դիմում ներկայացնելու) դրանց գործողությունը, ինչպես նաև սահմանել լիցենզիաների պայմանները, վերահսկել դրանց կատարումը և կիրառել սույն օրենքով սահմանված տուժանքներ<br><br>**12.** Սույն հոդվածի 3-րդ, 5-րդ 6-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ մասերով նախատեսված հիմքերով լիցենզիայի գործողությունը դադարեցվում է դատական կարգով՝ լիազոր մարմնի դիմումի համաձայն.<br>**13.** Սույն հոդվածի 12-րդ մասով նախատեսված դեպքում լիազոր | Չի ընդունվել.<br>լիցենզիայի գործողության դադարեցման կարգը և ընթացակարգերը արդեն իսկ սահմանված են «Լիցենզավորման մասին» մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածվով, ուստի անհարկի կրկնությունից խուսափելու նպատակով առաջարկը չի ընդունվում:<br><br>Չի ընդունվել.<br>լիցենզիայի գործողության դադարեցման կարգը և ընթացակարգերը արդեն իսկ սահմանված են «Լիցենզավորման մասին» մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածվով, ուստի անհարկի կրկնությունից խուսափելու նպատակով առաջարկը չի ընդունվում: | Չի ընդունվել:<br><br>Չի ընդունվել: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | մարմինն իրավունք ունի կասեցնելու լիցենզիայի գործողությունը մինչև դատարանի կողմից լիցենզիայի դադարեցման մասին դիմումի վերաբերյալ ընդունված վճիռն ուժի մեջ մտնելը: Այս դեպքում լիազոր մարմինը պարտավոր է լիցենզիայի գործողության դադարեցման մասին դիմումը դատարան ներկայացնել լիցենզիայի գործողության կասեցման օրվանից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում: Նշված ժամկետում դիմումը չներկայացնելու դեպքում լիցենզիայի գործողության կասեցումը համարվում է վերացված: | | |